

ՍԱՂՄՈՍ 76

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍՏՐՈՖ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐ

NASB	NKJV	NRSV	TEV	NJB
Հակոբի Աստծո հաղթանակած զորությունը	Դատաստանի մեջ Աստծո մեծությունը	Ազգերի վրա Աստծո վերջնական հաղթանակը տոնելու Սիոնի երգը	Հաղթող Աստվածը	Ակնաձանք ներշնչող օրհներգ ուղղված Աստծուն
<u>MT Ներածություն</u>				
Գլխավոր երաժշտին, նեգինոթի վրա, Ասափի Սաղմոսը կամ երգը				
76:1-3	76:1-3	76:1-3	76:1-3	76:1-3
76:4-7	76:4-6	76:4-6	76:4-6	76:4-6
	76:7-9	76:7-9	76:7-9	76:7-9
76:8-10				
	76:10-12	76:10-12	76:10	76:10-12
76:11-12			76:11-12	

ԸՆԹԵՐՑԱՆՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ ՑԻԿԼ («Սուրբ Գիրքը ճիշտ կարդալու ուղեցույց») ԸՍՏ ՊԱՐԲԵՐՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՀԵՂԻՆԱԿԻ ՆՊԱՏԱԿԻ ՀԵՏՔԵՐՈՎ

Սա սերտողության ուղեցույց մեկնություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսի ներքո: Մեկնաբանության մեջ հերթականությունը հետևյալ կերպ է՝ դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին: Դուք չպետք է այն զիջեք որևէ մեկնաբանի:

Մեկ անգամ նստելով կարդացեք ամբողջ գլուխը: Գտեք թեմաները: Համեմատեք ձեր թեմաների բաժինները հինգ ժամանակակից թարգմանությունների հետ: Պարբերությունները ներշնչանքով չեն կատարված, սակայն դրանք կարևոր են բնագրի հեղինակի նպատակին հետևելու համար, որը հանդիսանում է մեկնաբանության սիրտը: Յուրաքանչյուր պարբերություն ունի միայն մեկ թեմա:

1. Առաջին պարբերություն
2. Երկրորդ պարբերություն
3. Երրորդ պարբերություն, և այլն

ՀԱՄԱՏԵՔՍԱՅԻՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ա. ՀԿ-ը նշում է մի բան, որը կարծես թե հակասական հայտնություն լինի:

1. Արբահամի ընտանիքի հանդեպ ցուցաբերած հատուկ հոգածությունն ու ուշադրությունը (Սաղմ. 76:1-7)
2. Աստծո ցանկությունը, որ բոլոր ազգերը ճանաչեն Իրեն (Սաղմ. 76:8-12):

Բ. Կարծում եմ հենց այս հարցը նոր ուխտի նպատակն է, որը հայտնվում է ՆԿ-ում (այսինքն՝ Հիսուս Քրիստոսի ավետարանը): Ես փորձել եմ արտահայտել այս աստվածաբանական լարվածությունը երկու Հատուկ Թեմաների սահմաններում՝

1. ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ
2. ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՊԱԳԱՅԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԿ-ՅԱՆ ԿԱՆԽԱՍՈՒՄՆԵՐԸ ՀԱԿԱԴՐՎԱԾ ՆԿ-Ի ԿԱՆԽԱՍՈՒՄՆԵՐԻՆ

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 76:1-3

¹Աստված հայտնի է Հուդայում. Նրա անունը Իսրայելում մեծ է:

²Նրա խորանը Սաղեմում է և բնակարանը՝ Սիոնում:

³ՏԵՐՆ այնտեղ կոտրեց աղեղի նետերը,

Վահանը, սուրն ու ճակատամարտը: Սեյա:

76:1-3 Այս պարբերությունը արտացոլում է «սուրբ պատերազմը» (Սաղմ. 76:3): Պատմական միջավայրը կարծես թե Դավթի Միապետության շրջանն է (այսինքն՝ Ք. Ա. 922-586թթ), քանի որ այն նշում է թե՛ Հուդան և թե՛ Իսրայելը (Ք. Ա. 922-722թթ): Հայտնի չէ, թե ստույգ որ ռազմական գործողությունը կամ հարձակումն է եղել հեթանոս հարևանների կամ ՀՄԱ-ի որևէ գործի կողմից:

76:1 «հայտնի է» Եբրայերեն նշանակությունն ունի երկու ասպեկտ՝

1. ինչ-որ բանի կամ ինչ-որ մեկի մասին տեղեկություն (տես՝ Ծննդ. 4:1, Երեմ. 1:5)
2. անձնական փոխհարաբերություն

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՃԱՆԱԶԵԼ

❖ «Նրա անունը» Նկատեք, որ «Նրա անունը» գուգահեռ է *Էլոհիմին*:

«Անուն» բառի համար տես Հատուկ Թեմա Սաղմ. 1:6-ում: *Էլոհիմ* անվան համար տես՝ ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ԱՍՏՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆՆԵՐԸ

76:2 «Սաղեմ. . Սիոն» Տես ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ. ՄՈՐԻԱ, ՍԱՂԵՄ, ՀԵԲՈՒՄ, ԵՐՈՒՍԱԳԼԵՄ, ՍԻՈՆ:

76:3 Այստեղ թվարկված են մի քանի ռազմական առարկաներ, որոնց միջոցով լուսաբանվում է ՅԱՀՎԵԻ ռազմական հաղթանակը՝

1. նետեր (BDB 905)
2. վահան (BDB 171)
3. սուր (BDB 352)
4. պատերազմի զենքեր (BDB 536)

Թշնամու զենքերի կործանումը (տես՝ Սաղմ. 46:9, Եսայի 9:5, Եզեկ. 39:9-10) ցույց տալու մի կերպ դարձավ, որ՝

1. թշնամին կատարելապես պարտված է
2. Իսրայելը վստահում էր ՅԱՀՎԵԻՆ և զենքերի կարիք չունեի

❖ «Սեյա» Տես՝ Սաղմոս 3:2-ի գրառումը և Ներածություն, II:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 76:4-7

⁴Դու ավելի փառավոր ու գերազանց ես, քան որսի լեռները:

⁵Քաջասիրտները ավար դարձան, իրենց քնով ննջեցին, Զորություն ունեցող մարդկանցից ոչ մեկը չկարողացավ Իր ձեռքերն օգտագործել:

**Քո հանդիմանությամբ, ո՛վ Հակոբի Աստված,
 Կառքն ու ձին մահվան քնի մեջ ընկան:
 Դսկ Դու, Դու ահավոր ես .
 Ո՛վ կարող է կանգնել Քո առջև Քո բարկության պահին:**

76:4-7 Այս պարբերությունը շարունակում է ռազմական նկարագրությունը:

76:4
NASB «փառահեղ . . . վեհաշուք»
NKJV «փառավոր և գերազանց»
NRSV, TEV «փառավոր . . . վեհաշուք»
NJB «լուսապայծառ . . . անվանի»
JPSOA «փառահեղ . . . փառավոր»

Այս երկու տերմինները նկարագրում են ՅԱՀՎԵԻՆ:

1. Առաջինը (BDB 21) հնարավոր է Սաղմ . 76:3-ի հետ կապված «կայծակի հարվածի» (տես՝ Սաղմ . 78:48) հետ առնչվող մեկ այլ տերմին է, որը շեշտադրում է ՅԱՀՎԵԻ ներկայության լուսավոր կողմը (այսինքն՝ լույսը), ինչպես Ելքի ժամանակ *Շեխինա* ամպը:
2. Երկրորդը (BDB 15) հնարավոր է վերաբերում է բոլոր աստվածների (կուռքերի) վրա ՅԱՀՎԵԻ գերազանցությանը, որը ակնարկվում է Սաղմ . 76:7-ում (տես՝ 1 Մնաց . 16:25, Սաղմ . 89:7, 96:4):

❖
NASB, NKJV, JPSOA «որսի լեռները»
NRSV, REB, LXX «հավիտենական լեռները»
NJB «ավարի լեռը»
NET «դու իջնում ես սարերից, որտեղ սպանեցիր քո որսին»

Ակներև, սա դժվար մեկնաբանվող արտահայտություն է: UBS Տեքստային Նախագիծը (Էջ՝ 330) տալիս է NRSV տարբերակին “C” գնահատական (բավականին կասկածելի): Այս նկարագրությունը հնարավոր է Ամբ . 3:6-ի շեշտադրումն է: UBS առաջարկում է NRSV կամ NJB տարբերակները: NET Աստվածաշունչը այն դիտարկում է որպես «առյուծի» համար փոխաբերություն:

76:5 «քաջասիրտները» Այս տերմինը (BDB 7 BDB 524 ԿԱԶՄՈՒԹՅԱՄԲ) ակնարկում է համառ, Աստծուն հակառակվող վերաբերմունք (տես՝ Եսայի 46:12): Սա հատկանշական է այն զավթիչներին, ովքեր՝

1. սպանվելու են (այսինքն՝ քնելու, որպես մահվան փոխաբերություն)
2. կողոպտվելու են (BDB 1021, KB 1531, *Hithpoel* ՎԱՂԱԿԱՏԱԲ)

քանի որ նրանք այնքան էին վախենում, որ չէին կարողանում կռվել (այսինքն՝ ձեռքերն օգտագործել):

❖
NASB, NKJV «կողոպտվեցին»
NRSV «ավար դարձան»
TEV «թալանվեց նրանց ամբողջ ունեցվածքը»
NJB «նրանցից վերցվեց» (կիրառված է ԲԱՅ Սաղմ . 76:4բ-ի համար)
LXX «նեղություն կրեցին»
REB, JPSOA «հափշտակվեցին»
Peshitta «սարսափեցին»

Այս հազվադեպ ձևը (*Hithpoel*) սահմանվում է KB-ի կողմից (1531) որպես «կողոպտվել»: BDB (1021) սահմանում է այն որպես «թալանվել»: Չավթիչները ցանկանում էին հափշտակել Աստծո քաղաքը՝ տաճարը, սակայն հենց իրենք հափշտակվեցին:

76:6 «Քո հանդիմանությամբ» ՅԱՀՎԵԻ հզոր ձայնը հաղթանակներ է շահում (տես՝ Սաղմ. 80:16), ինչպես ստեղծում է (տես՝ Ծննդոց 1, Հոբ 26:5-11, Սաղմ. 18:7-15, 104:5-9): Նրա ձայնը այս աշխարհում Նրա կամքի դարձվածքն է: Նա խոսում է՝ կատարվում է:

Հնարավոր է հանդիմանությունը (BDB 172) վերաբերում է (1) Սաղմ. 76:4բ-ի առյուծի մոնյունին: JPSOA Սաղմոս 76:2-ը դիտարկում է որպես առյուծի գուրբին վերաբերող (կիրառվում է Հոբ 38:39-40-ից որպես մեջբերում) կամ (2) ճակատամարտի աղաղակ՝ կանչ:

❖ **«ո՛վ Հակոբի Աստված»** Սա մի անուն է, որը կենտրոնանում է նահապետների հետ ՅԱՀՎԵԻ ուխտի և խոստումների վրա:

❖ **«կառքն ու ձին մահվան քնի մեջ մտան»** Սա Իսրայելի փախուստի համար Կարմիր Ծովի բաժանման պատմությունից վերցված տերմինաբանություն է, սակայն եգիպտական արքայական գործի վրա ծովի փակման դրվագից (տես՝ Ելից 14:28,30, 15:1,21): Այս նույն նկարագրությունը գտնվում է Երեմիայի կողմից բնութագրված Բաբելոնի պարտության տեսարանում (տես՝ Երեմ. 51:21):

Հնարավոր է, որ Սաղմ. 76:6 կապված է 76:5-ի հետ: Եթե այդպես է, ապա «քուն» բառը մարտիկների կողմից իրենց հմտությունները կատարելու անկարողությունն է (այսինքն՝ թույլ ձեռքերը), ոչ թե ակնարկ է մահվան մասին, որը հաճախ նկարագրվում է որպես «քուն» (տես՝ 2 Օր. 31:16, 2 Թագ. 7:12, 3 Թագ. 1:21, Հոբ 7:21):

ՀԿ-ը հաճախ է խոսում, որ մարդիկ որպեսզի չհասկանան, Աստված պատճառում է «քուն», ինչ-որ բան «տեսնել», «լսել» (այսինքն՝ 2 Օր. 29:4, Սաղմ. 69:23, Եսայի 6:9-10, 29:10, Միքիա 3:6):

76:7 «պետք է վախենան / ահավոր ես» Սա կարող է վերաբերել՝

1. Ուխտի Աստծո և Նրա ժողովրդի թշնամիներին
2. ազգերի կուռքերին (տես՝ Սաղմ. 89:7, 96:4, 1 Մնաց. 16:25)

❖ **«ով կարող է կանգնել Քո առջև / ներկայության մեջ»** Սա դատարանի տեսարան է, սովորաբար նմանեցվում է վերջին ժամանակի հետ (տես՝ Եզրաս 9:15, Սաղմ. 130:3, Նաում 1:6, Մաղ . 3:2, Հայտն. 6:17): Աստծո ժողովուրդը կկարողանա կանգնել Նրա առջև այդ օրը (այսինքն՝ Դուկ. 21:36, Հուդա հհ. 24-25):

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 76:8-10

⁸Դու երկնքից լսելի դարձրիր դատաստանը .

Երկիրը վախեցավ ու լռեց .

⁹Աստված ելավ դատաստան տեսնելու,

Որպեսզի փրկի երկրի բոլոր հեզերին: Մելա:

¹⁰Իսկապես, մարդու բարկությունը Քեզ գովելու է,

Իսկ մնացած բարկությունը Դու ես զսպելու:

76:8-10 Հնարավոր է, որ Սաղմ. 76:7 պետք է այս պարբերության մեջ լիներ (տես՝ NKJV, NRSV, TEV, NJB):

Այս համատեքստում «երկրի բոլոր հեզերը» վերաբերում է ՅԱՀՎԵԻՑ վախեցող՝ ակնածող բոլոր մարդկանց (տես՝ Սաղմ. 40:13-17): Նկատելի է հետևյալի միջև տիեզերական տարրն ու հակադրությունը՝

1. Աստված փրկում է հեզերին
2. սակայն բոլոր ընդունում են Նրան (տես՝ Սաղմ. 72:11, 76:12, Փիլ. 2:6-11):

76:10 «մնացած» Այս բառը մի քանի տարբեր իմաստներով է կիրառվում:

❖ Այս ակնառու տեսարանը ակնարկում է ՅԱՀՎԵԻՆ որպես պատերազմող (տես՝ Եսայի 59:17): Այս նույն նկարագրությունը կիրառում է Պողոսը Եփես .6:10-17-ում, որը մատնանշում է «հոգևոր պատերազմը»: ՅԱՀՎԵՆ հաղթողն է: ՅԱՀՎԵՆ Իրեն վստահողների չեմպիոնն է:

UBS *Ձեռնարկը* (էջ՝ 669) նշում է, որ NAB և NEB (նաև REB) փոխում են ձայնավորներն այս համարում դարձնելով այն հյուսիսում (քաղաք) և հարավում Պաղեստինի (ազգեր) աշխարհագրական տեղանքներ՝ այն գուգահեռելով Սաղմ .76:11բ-ի հետ:

1. մարդը (ՇԴՏ) դառնում է Եդովմ (ՇԴՏ)
2. բարկությունը (ՌՄԴ) դառնում է Խամեթ (ՌՄԴ)

Իսնդիրն այն է, որ «բարկություն» բառը երկու անգամ է կիրառվում Սաղմ .76:10-ում: Եթե այն նպատակային բառախաղ չէ, ձայնավորների այս փոփոխությունը կասկածելի է և չի ընդունվում որևէ հնագույն տարբերակի կողմից:

NASB (ԹԱՐՄԵՑՎԱԾ) ՏԵՔՍՏ. ՍԱՂՄՈՍ 76:11-12

¹¹Ուխտ արեք ձեր ՏԵՐ Աստծուն ու կատարեցեք .

Նրա շուրջբոլորը գտնվողները թող ընծանե՛ր բերեն Նրան,
Ում նկատմամբ երկյուղ պետք է ունենալ:

¹²Ինքը կտրելու է իշխանների հոգին,

Նա ահավոր է աշխարհի թագավորների համար:

76:11-12 Ինչպես որ Սաղմ .76:7 կարող էր համադրվել 76:8 և 9-ի հետ, այնպես էլ Սաղմ .76:10-ը կարող էր համադրվել 76:11-12-ի հետ (տես՝ NKJV, NRSV, TEV, NJB): Պարբերությունների բաժանելը չունի տեքստային նշան: Երբայերեն տեքստում այն ներշնչանքի ասպեկտ չէ: Պարբերությունների բաժանումը պետք է հաստատվի համատեքստից (այսինքն՝ յուրաքանչյուր պարբերություն ունի մեկ կենտրոնական ճշմարտություն կամ թեմա):

76:11ա Սա նկարագրում է Սաղմ .76:9-ի «հեզերին»: Երկու ՀՐԱՄԱՅԱԿԱՆՆԵՐ են կիրառվում նկարագրելու նրանց գործողությունները:

1. ուխտ արեք – BDB 623, KB 674, *Qal* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ
2. կատարեցեք *դրանք* – BDB 1022, KB 1532, *Piel* ՀՐԱՄԱՅԱԿԱՆ (տես՝ Ղևտացիների 27, Թվոց 30, 2 Օրինաց 23:21-23):

76:11բ Սաղմոս 76:11-ի երկրորդ տողն ունի *Hiphil* ԱՆԿԱՏԱՐ, որը կիրառված է ՀԱՅՅԱԿԱՆ իմաստով («Նրա շուրջբոլորը գտնվողները թող ընծանե՛ր բերեն Նրան»): Սա երրորդ նկարագրող արտահայտությունն է, որը վերաբերում է կա՛մ՝

1. գոհության գոհին ուխտի ավարտի ժամանակ
2. կա՛մ էլ պահանջվող գոհին (տես՝ Ղևտացիների 1-7)

Եթե Սաղմ .76:11ա վերաբերում է ուխտի ժողովրդի մեջ հավատարիմ հետևորդներին, ապա 76:11բ-ն վերաբերում է աշխարհով մեկ սփռված հավատարիմ հետևորդներին, ովքեր երկրպագելու են ՅԱՀՎԵԻՆ (տես՝ Սաղմ .45:12, 68:29,31, 72:10, Եսայի 18:7, Սոփ .3:10):

76:11 «Նրան ընծաներ բերեն» Ծննդ .49:10-ում Հակոբի՝ Իսրայելի հայտնի մարգարեությունը մատնանշում է Հուդային որպես այն ցեղը, որից սերվելու է Մեսիան: Այնտեղ *Սեղով* և *Ն* (BDB 1017) անունը համազոր է «իշխան»-ին, սակայն հնարավոր է բաղաձայնները բաժանվեն *ի* և *ն* «տվեր Նրան» (BDB 1010) ավելացնելով նոր ձայնավորներ (տես՝ NIDOTTE, հատոր 4, էջ՝ 1223): Եթե սա ճիշտ է, ապա ՅԱՀՎԵԻ ազգերից «հարկեր» վերցնելու գաղափարը հաստատվում է (տես՝ Սաղմ .68:29, 76:11, Եսայի 18:7): Այս հարկը ինչ-որ մեկի գերիշխանությունը ցույց տալու ՀՄԱ-ում կիրառվող կերպերից է: Մի օր ազգերը գալու են ՅԱՀՎԵԻՆ:

ՀԱՏՈՒԿ ԹԵՄԱ . ՅԱՀՎԵԻ ՀԱՎԻՏԵՆԱԿԱՆ ՓՐԿԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐԸ

76:12 Ինչպես որ ՅԱՀՎԵԻ փրկությունն է տիեզերական (տես՝ Սաղմ . 76:9), այնպես էլ Նրա դատաստանը (Սաղմ . 76:12):

«Հոգի» տերմինը (*ruach*, BDB 924) նշանակում է մարդկային անձ:

«Կտրել» (BDB 130, KB 148, *Qal ԱՆԿԱՏԱՐ*) ԲԱՅԸ երբայերեն արմատ է, որն ունի մի քանի նշանակություն՝

1. կտրել – հեռացնելու իմաստով
2. կտրել – հավաքելու իմաստով, ինչպես օրինակ խաղողի բերքահավաքը
3. կտրել – փակ տարածքը ամրացնելու իմաստով (օրինակ՝ ամրոց, բերդ)

Սաղմ . 76:11-ի պատճառով հնարավոր է մեկը մտածի, թե #2 տարբերակը կարող է մատնանշել վերջին ժամանակի հավատացյալ ազգերի հավաքելը(այսինքն՝ «իշխանները», BDB 617, տես՝ Եզեկ . 28:2), ովքեր վախենում են (բռնացի՝ ովքեր ահավոր են, BDB 431, KB 432, *Niphal ԴԵՐԲԱՅ*) Աստուծոց՝ ցույց տալով Իր սքանչելի գորությունը Երուսաղեմը և Իր ուխտի ժողովրդին պաշտպանելով:

ՔՆՆԱՐԿՄԱՆ ՀԱՐՑԵՐ

Սա ուղեցույց հանդիսացող սերտողության մեկնաբանություն է, որը նշանակում է, որ դուք եք պատասխանատու Աստվածաշնչի ձեր մեկնաբանության համար: Մեզնից յուրաքանչյուրը պետք է քայլի իր ունեցած լույսով: Դուք, Աստվածաշունչը և Սուրբ Հոգին եք մեկնաբանության մեջ առաջին տեղում: Դուք չպետք է այն զիջեք մեկնաբանին:

Քննարկման այս հարցերը կազմվել են ձեզ օգնելու, որպեսզի մտածեք գրքի այս բաժնի գլխավոր հարցերի շուրջ: Դրանք մտածելու տեղիք տվող հարցեր են և վերջնական չեն:

1. Արդյո՞ք Սաղմոս 76:1 արտացոլում է բաժանված Միապետության շրջանը:
2. Ինչո՞ւ է Սաղմոս 76:4-ն այդքան դժվար թարգմանելու համար:
3. Արդյո՞ք Սաղմոս 76:9 գերության մեջ գտնվող հրեաների համար տիեզերական ակնարկ կամ ուղերձ է:
4. Ինչպե՞ս է Սաղմոս 76:11-12 կապված նախորդող համարների հետ: